ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-40-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 2-րդ կետի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝

«

Ծառայողի աշխատավարձի մակարդակները	Աշխատավարձի աճ	տեսուչ	հարկադիր կատարող	ավագ հարկադիր կատարող, առաջ. խորհրդատու, առաջին կարգի խորհրդատու	գլխավոր խորհրդատու	բաժանմունքի պետ, բաժնի պետի տեղակալ	մարզային բաժնի պետ, Երևանի բաժնի պետ	կենտրոնական մարմնի բաժնի պետ	գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ	գլխավոր հարկադիր կատարող
		հաշվարկման գործակիցը								
11	աճ չկա	1.85	2.38	2.76	3.22	3.74	4.34	5.05	5.86	6.70
10	3 տարին մեկ	1.80	2.30	2.69	3.13	3.63	4.22	4.90	5.70	6.55
9		1.75	2.22	2.61	3.03	3.52	4.09	4.75	5.52	6.40
8		1.69	2.14	2.54	2.94	3.43	3.98	4.61	5.36	6.25
7	2 տարին մեկ	1.64	2.06	2.46	2.86	3.32	3.86	4.48	5.21	6.10
6		1.59	1.98	2.39	2.76	3.22	3.74	4.34	5.05	5.88
5		1.53	1.90	2.31	2.69	3.13	3.63	4.22	4.88	5.75
4	յուրաքանչյուր տարի	1.48	1.83	2.25	2.61	3.03	3.52	4.09	4.75	5.61
3		1.43	1.75	2.18	2.54	2.94	3.43	3.98	4.61	5.48
2		1.38	1.67	2.12	2.46	2.86	3.32	3.86	4.48	5.34
1		1.32	1.59	2.06	2.39	2.76	3.22	3.74	4.40	5.21

»:

2) 4-րդ մասի «1.00 գործակցին» բառերը փոխարինել «1.32 գործակցին» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի

Վերը նշված օրենքների նախագծերի ներկայացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից շրջանառության մեջ դրված «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ 6-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությամբ: